

«ՕՏԱՐԻ» ՀԵՏ ՀԱՄԱԳՈՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ
ԽՆԴԻՐԸ ԵՎ ՄՈՎՍԵՄ ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ-
ՀՈԳԵՎՈՐ ԿԵՆՍԱԳՈՅՈՒԹՅԱՆ» ՊԱՏՄԱՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

Ռոմիկ Քոչարյան

*Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ,
Մատենադարան, Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի
գիտահետազոտական ինստիտուտ*

Առհասարակ, մարդկային բանական հոգուն ու բովանդակ անձին բնական ու նաև բանական է սիրել ու նվիրված լինել իր ամուսնական գուգակցին ու զավակներին, թեև ոչ բոլորն են իրապես սիրել ու գործել իրենց ինքնության ու կյանքի այդ կոչմանը համապատասխանությամբ: Եվ այս բնույթի կապվածությունն հնարավոր է նկատել նաև կենդանական աշխարհում՝ այդկերպ հատկորոշվելով հենց բնագոյային բնականության սահմաններում ևս: Անշուշտ, տարբեր են մերձավորագույն արյունակցի ու հենց անմիջական սերունդի հետ կապվածությունը կենդանու և մարդու պարագայում, քանզի կենդանականի գուտ բնագոյային բնականությամբ կապվածությունն իր պոտենցիալով նվազ է մարդկային բանական հոգու ու հենց հոգեմարմնավոր միասնությամբ բովանդակ անձի՝ բնականի հետ մեկտեղ նաև հենց բանական սիրով ու իմաստությամբ կապվածությունից: Եվ սակայն, այս առավելությամբ հանդերձ, սա չէ առավել առանձնահատկողը ա) մարդկային բանական հոգու բնության, բ) հոգեմարմնավոր, որում և հոգուն ենթակարգված մարմնավոր գոյությամբ բնորոշվող ամբողջական անձի, գ) անձանց մտակերտ, հոգեկերտ ու ձեռակերտ ներդաշնակորեն համագործակից փոխգործունեության ձեռքբերումների միջոցով քաղաքակրթական կենսակարգի ու կենսագործունեության վերաբերմունքի, հարաբերության ու գործողության:

Մարդկային բանական սեռին բնական է նաև սիրել ոչ միայն իր ընտանիքի անդամներին, այլև ոչ մերձավորագույն իր արյունակցին ու ազգակցին՝ նախնյաց և սերունդներին, թեև ոչ ամենքն են իրապես սիրել ու գործել իրենց ինքնության ու կյանքի այդկերպ կոչմանն ադեկվատությամբ: Այդօրինակ կապվածությունն ու հենց հավաքականությունն կարելի է նկատել նաև կենդանական աշխարհում՝ բնագոյային բնականությամբ, և սա նույնպես մարդկային բանական հոգու

պարագայում՝ կենդանական բնագոյայինի համեմատ ունեցած տարբերությամբ հանդերձ, հիմնորոշ ու գերակա այն առանձնահատուկը չէ, որ և կարող էր կայացնել ու հայտորոշել մարդկային բանական հոգու բնության առավելությունը՝ ունենալ «մարդասիրության» հոգևոր զգացմունքի ու գաղափարի կատարելություն, ըստ մարդկային կարողության, և լինել ստեղծունակ քաղաքակրթական-հոգևոր ու բարոյական համակեցության ընդհանուր կենսակարգի ու որոշակիորեն անձնավորյալ կենսակերպի:

Մարդկային բանական հոգու բնությանն ու կենսակերպին, ի տարբերություն կենդանական բնագոյային կապվածության հնարավորությունների, զարմանալիորեն բնական ու նաև բանական է սիրել հենց «օտարին» և իր ինքնության, կենսակերպի ու մշակույթի ներկատարելագործումը հնարավոր, անհրաժեշտ ու նախընտրելի տեսնել, հասկանալ ու իրագործել «օտարի» հետ խաղաղ ու համերաշխ հոգեկեցույց ու կենարար փոխգործունեությամբ: Մարդկային ինքնությունում, կենսակերպում ու մշակույթում «օտարի» նկատմամբ առաքինի կարգավորությունը՝ «մարդասիրության» հենքով «արդարության» կենսագործումը, որում և՛ հոգեկեցույց ու կենարար կենսագործունեությունն իր բազմաբովանդակությամբ՝ որպես վերաբերմունք, հարաբերություն ու գործողություն, ներկայանում է որպես քաղաքակրթական-հոգևոր ու բարոյական կենսագոյության ու ստեղծարարության բովանդակության ու դրան ադեկվատ կերպի իմաստության խորհուրդ, հիմնորոշ սկզբունք ու ընթացք ի կատարելություն:

1. Այժմյան մեր ներկայից դեռ հարյուրամյակ առաջ կային ցեղեր, որոնց մեջ արմատավորված չէին քաղաքակրթության համար հիմնորոշ «մարդասիրության», որից և բխող «արդարության» հոգևոր զգացմունքներն ու գաղափարները՝ իրենց ամենացայտուն դրսևորման, այն է՝ օտարի նկատմամբ վերաբերմունքում: Օտարի հանդիպելիս հետամնաց ու վայրենաբարո այդ ցեղերի առաջնային զգացմունքն ու միտքն այն էր, թե՛ կարո՞ղ են, արո՞յոք, ուտել նրան: Իսկ դրան հակառակ, դեռ հազարամյակներ առաջ կային ու նաև այժմ կան ազգություններ, ազգեր, ժողովուրդներ, որոնց շրջանում «օտարի» նկատություններ, ազգեր, ժողովուրդներ, որոնց շրջանում «օտարի» նկատմամբ վերաբերմունքը ընկալվում է որպես բարձրագույն բարոյական մամբ վերաբերմունքը ընկալվում է որպես բարձրագույն բարոյական հոգևոր արժեք, և լիովին տարբեր է «օտարի» նկատմամբ զգացմունքն ու միտքը, որը դրսևորվում է հարգանքով, հյուրասիրությամբ և օգնելու պատրաստակամությամբ:

Հայոց ազգի կյանքն ուսումնասիրելով՝ կարելի է նկատել, որ տարբեր ազգեր ու ցեղախմբեր, իսկ ժամանակակից շրջանում՝ առավելաչափ թուրքերը իրենց համատեղ կամքի դրսևորում հանդիսացող հասարակությանն ու պետությանը հիմնականում համակամ ու համահիտ՝ դարեր շարունակ ու նաև XIX դ. վերջում ու XXդ. սկզբում իրենց ինքնության գոյությունն ու գործառնությունը գրավյալ տարածքում և «իրավունքը» բնակատեղի նկատմամբ սկզբունքորեն ու մշտապես որպես «երաշխավորված» իմաստավորել՝ հնարավորել ու անհրաժեշտել են միմիայն տեղաբնակների զանգվածային կոտորածներով, կամազրկմամբ ու իրավազրկմամբ, դիսկրիմինացիոն ներքին քաղաքականությամբ ու բնակաթափմամբ, հայրենազրկմամբ ու բնաջնջմամբ¹: Օսմանյան կայսրության մեջ դարեդար վարվող ներքին քաղաքականությամբ հաստատյալ համակեցությունում թուրքերի համեմատ՝ օտարների ու հենց բնիկ հայերի նկատմամբ օրենքով, գրյալ ու նաև չգրյալ էմպիրիկ կանոններով հաստատված էր ազատ իրավահավասարության բացակայություն: Կայսրության մեջ հաստատյալ համակեցության կենսակարգում, որում նաև սոցիալական կառուցակարգում, դրանց ժամանակընթաց ու ակցիդենցիալ որևոր փոխակերպումների մեջ պահպանվում էր կայուն մի հանրահատկություն. պետության քաղաքացի և, սակայն, իրենց ինքնությանն ու քրիստոնեական հավատին անուրաց հայերի և ուրեմն՝ թուրքերի ընկալմամբ՝ իրենց մահմեդական հավատին ու ինքնությանն օտար էթնոտարածքի բնիկ հայերի կենսագոյությանը սկզբունքորեն չընձեռել իրենց հետ իրավահավասար պայմաններ²: Օսմանյան կայսրությունում վարվող ներքին ու նաև արտաքին քաղաքականության մեջ արմատավորված ու միշտ ներկա էր առանցքային այն մտայնությունը, որ արդեն իրենց պետության հպատակ քաղաքացի՝ էթնոտարածքի բնիկ քրիստոնյա հայերի գոյությունը կամ չգոյությունը սկզբունքորեն պետք է դիտել սոսկ որպես միջոց՝ օսմանների ու հենց թուրքերի կեն-

¹Տե՛ս Ջուլյան Մ. Կ., Արևմտյան Հայաստանը XVI-XVII դդ., Եր., 2ՄՍԶ ԳԱ հրատ., 1980, էջ 23-75, 94, 96-99, 104-119, 139-141, 144-146, 152-160, 184-190, 269-307, 322-336 և այլն; և՛ս նե՛ս Ջուլյան Մ. Կ., Հայ ժողովրդի XIII-XVIII դարերի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, Գ. Ա (քաղաքական պատմություն), Եր., 22 ԳԱԱ հրատ., 1990, էջ 103-225:

²Որպես ասվածը վավերացնող պատմագիտական վկայագրություն տե՛ս Ջուլյան Մ. Կ., Արևմտյան Հայաստանը XVI-XVIII դդ., Եր., 2ՄՍԶ ԳԱ հրատ., 1980, էջ 257-258, 264-298, 301-307, 309-310, 322-336 և այլն:

սագոյությունը հնարավորելու, հաստատելու ու ապահովելու համար: Ինքնության ու կենսագոյության մինչ ի մահ վտանգվածության ու նաև մահվան սպառնալիքով մահմեդականացման գործընթացն ու խնդիրը թուրքերի գերիշխանության բազմադարյա ժամանակաշրջանում իրենցից տարբեր մարդկային ինքնության ու հենց «օտարի» և որոշակիորեն գրավյալ ու արդեն իրենց պետական իշխանության ենթակա քաղաքացի հանդիսացող՝ էթնոտարածքի բնիկ հայ ժողովրդի նկատմամբ իրագործվում էր հենց «մարդասիրության» ու ըստ այդմ՝ հավասար «արդարության» սկզբունքային բացակայության հիմնապատճառով: Օսմանյան կայսրության ներքին ու արտաքին քաղաքականությունում թուրքերի հավատին, ինքնությանն ու կենսակերպի ներկայի ու հեռանկարի ակնկալիքին «օտար» ու հենց խոչընդոտ դիտվող էթնոտարածքի բնիկ հայ ժողովրդի նկատմամբ ցեղասպանական հակվածության մշտական, բազմադարյա հիմքով իսկ, որպես իր հենց այդ նշանակետն ունեցող քաղաքական հետևողական նպատակային ծրագիր ու կուլմինացիա, երիտթուրքերի կողմից իրագործվեց ցեղասպանություն: Եվ իրենց նախնյաց այդ մտածելակերպին ու գործելակերպին օրինակյալ կենսագործունեությանը, այն է «օտարի» նկատմամբ վերաբերմունքին, հարաբերությանն ու գործողությանը, իրենց հավատարմությունը, համախոհությունն ու վերստին գործունակությունն են նրանք հայտորոշում նաև այժմ իրենց հավաքական կամքի դրսևորում հանդիսացող պետությանն ու հասարակությանը համատեղ՝ իրենց ինքնությունում ցեղասպանության նկատմամբ անզոլում ինքնաճանաչողությամբ, ըստ էության, և ինքնությունում, և՛ ընդհանուր կենսակարգում, և՛ կոնկրետորեն անձնավորյալ կենսակերպում չկարողանալով իրենց հոգին «պոկել», անջատել ու ազատել բնաջնջված ու հայրենագրկված՝ էթնոտարածքի բնիկ ու իրենց օտարագգի քաղաքացիներից հայերից, բռնազավթյալ բոլորատեսակ ու երկրնային՝ հոգևոր ու կյուրեղեն «գողունի» հետ կապվածությունից, այլ ընդհակառակը, որը պահելով ու օգտվելով և որը ոչնչացնելով ներկայում ու պատրաստակամությամբ՝ նաև հեռանկարում:

2. Հայ հասարակության ու պետականության էական խնդիրներից է Օսմանյան կայսրությունում թուրքերի կողմից կանխամտածված և հասարակության ու պետության ողջ ռեսուրսներով իրագործված Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարումը, հայոց հոգևոր-քաղաքակրթական ու բարոյական ինքնությամբ կենալու, ընդամին՝

քաղաքակրթական համակեցության կենսակարգի ողջ բաղադրակազմի ներկա ու ապագա առ բարեկարգություն հեռանկարային զարգացման հնարավորումը, սատարումն ու ապահովումը: Որպես ցեղասպանության հետևանքներ հիմնականում նշվում են հետևյալ խմբերը՝ ա) պատմական հայրենիքից զրկումը, բ) մշակութա-քաղաքակրթական ժառանգության կորուստը, գ) իր հայրենի կենսատարածքում բնիկ հայ բնակչության ոչնչացումը, դ) կուրթական կորուստը և ունեզրկումը, ե) հոգեկան ցնցումները և հոգեբանական բարդություններ³: Հետևանքների հաղթահարման մեջ, ինչպես Հոլոքոստի առնչությամբ Գերմանիայի փոխհատուցումը, այնպես էլ Հայոց ցեղասպանության առնչությամբ իր անելիքն ունի Թուրքիան: Ցեղասպանության առնչությամբ թուրքերի փոխհատուցումը սկզբունքային ու կարևորագույն խնդիր է՝ միջազգային ու հենց միջպետական քաղաքական հարաբերություններում հայոց հասարակության ու պետականության կողմից ներկայացվող քաղաքակրթական-հոգևոր ու բարոյական, քաղաքական, տնտեսական, սոցիալական... բազմաբովանդակ իրավարար պահանջատիրության ամբողջական խնդրակարգում, որում նաև դրվում է ներկայում ու հետագայում ցեղասպանության ու բոլորատեսակ եղեռնագործությունների բացառումն ու միջազգային համատեղ համաձայնագրերով, ուժերով ու ամենատեսակ ռեսուրսներով երաշխավորումը: Սակայն, եթե հասարակության մեջ արմատավորված են որոշակի բացասական կողմնորոշումներ, մոլություններ, ախտեր ու արատներ միմյանց նկատմամբ փոխվերաբերմունքում, փոխհարաբերությունում ու փոխգործողությունում, և դրանց հակառակ ու հենց հաղթահարմանն ուղղվածությամբ՝ հայոց պետականությունում ձեռքբերյալ ու հաստատույալ համակեցության կենսակարգում անհրաժեշտ, սատարող ու նախընտրելի տեսանող նախաձեռնության ու պարտավորության սկզբունքով ամրագրյալ չեն առաքինություններով կարգավորյալ մարդկային ինքնության, կենսակերպի ու ստեղծարարության նկատմամբ հայոց համատեղ կամքի արտահայտություն հանդիսացող հասարակության ու պետության ձգտումն ու մտակողմնորոշումը՝ արդյունագործված որպես քաղա-

³Տե՛ս Թարուհի Ա. Последствия геноцида армян и возможности их преодоления. Էլեկտ. ռեսուրս. http://www.genocide.org.ua/pdf/genocide/marukjan_a-posledstvija_genocida_armjan_i_vozmozhn.pdf/14.06. 2015/:

քակրթական-հոգևոր ու բարոյական իդեան մտահայեցող դիտավորության և ըստ այդմ՝ կերպարանումի ու կատարումի համախոհություն, պատրաստակամություն ու հաստատակամություն, ապա՝ ցեղասպանության հետևանքների հաղթահարմանն ուղղությամբ սուկ «արտաքին» հատուցումը չի կարող ապահովել հայոց քաղաքակրթական-հոգևոր ինքնության, կենսակերպի ու մշակույթի հեռանկարային զարգացում, այլ կարող է «արտաքին» պայմանի նպաստավորությամբ անգամ մատնվել ունայնության: Տեղասպանության հետևանքների սկզբունքային ու լիակատար հաղթահարումը հնարավոր է ոչ միայն հայ հասարակության ու պետականության նկատմամբ արտաքին հատուցման գործոնով, այլև ներքին գործոնով՝ հայ ինքնության, կենսակարգի ու ստեղծարար գործունեության առ բարեկարգություն անհրաժեշտորեն ու նախընտրելիորեն պիտոյական անելիքների ինքնահասկացմամբ ու կենագործմամբ: Քաղաքակրթական-հոգևոր ու բարոյական ինքնության, ընդհանուր կենսակարգի ու անձնավորյալ կենսակերպի, մշակույթի ու ստեղծարար գործունեության ամենայն հեռանկարային զարգացման խնդիրների լուծումը հնարավորվում ու ապահովվում է միմիայն «ներքինի»՝ առ բարեկարգություն դիտավորության և ըստ այդմ՝ կերպարանման ու կատարումի միջոցով, որին «արտաքինը» կարող է միայն նպաստարար լինել: Բսկ ինքնության, կենսակարգի ու ստեղծարար գործունեության հիմնորոշ խնդրակարգի ամենայն պարագայում ուսումնասիրության, հասկացման ու մեկնորոշման են ենթակա երկու խումբ հատկություններ՝ կարիքներ և առավելություններ: Ընդ որում, ասելով «կարիք», պետք է հասկանալ բարեկարգության համեմատ «ներքինի» իմաստության ու ամենայն առաքինության, և արտաքինի՝ կարելություն ընձեռող պայմանների, պակասը, որոնց ձեռքբերմանը նպատակամետ հոգածությամբ և հնարավորվում, հասանելի է դառնում ու հենց կենագործվում բարեկարգությունը⁴: Բսկ անձանց, խմբերի, ազգի, ողջ հասարակության պոտենցիալ առավելությունների գործունեացմամբ էլ հենց կարող են կենսագործվել այդ կարիքների հոգածությունը և տկարությունների հաղթահարումն առ բարեկարգություն:

⁴Տե՛ս Քոչարյան Ռ., Ջիջյան Ա., Սոցիալական աշխատանքը, բարեգործությունը և բրիստոնեական կենսակերպի արմատավորումը, Եր., «ԴԱԼԼ» հրատ. 2009, էջ 169:

3. Բազում են ինչպես կարիքներն ու տկարությունները, այնպես և առավելությունները ունակություններն ու արդեն ձեռքբերյալ կարողությունները: Աստ՝ հայոց հոգևոր-քաղաքակրթական ինչ որոշակի ու կոնկրետ առավելության մասին է խոսքը: Ի տարբերություն «օտարի» հանդեպ թուրքերի այդօրինակ վերաբերմունքի, հարաբերության ու գործողության և ուրեմն՝ ամբողջական կենսագործունեության, լիովին այլ կերպ է կենսագործվել հայոց կյանքում «օտարի» նկատմամբ վերաբերմունքն ու նրա հետ համագոյությունը: Դեռ նույնիսկ մեկուկես հազարամյակից ավել տարիներ առաջ հայոց հոգևոր զարթոնքն ու զարգացումը՝ և քրիստոնեության վերատարածումը, և՛ հայոց լեզվի նշանագրերի գյուտն ու գրական հոգևոր մշակույթի բուռն զարգացումը, իրագործվում էր՝ ուղեկցվելով նաև հարևան երկրների ու ազգերի՝ Վրաստանի ու Աղվանքի հոգևոր զարթոնքին նպաստարարությամբ: Հայոց կյանքում քրիստոնեության վերատարածումը ս. Գրիգոր Լուսավորչի կողմից զուգակցվեց նաև նրա աջակցությամբ Վրաստանում ս. Նունեի քրիստոնեության քարոզչությամբ ու տարածմամբ, ինչպես նաև Աղվանքում ս. Գրիգորիոսի քարոզչությամբ և նույնիսկ նահատակությամբ: Ս. Մեսրոպ Մաշտոցը աստվածային հայտնությամբ ստեղծելով հայոց նշանագրերը և ս. Մահակ Պարթևի ու իրենց աշակերտների համագործակցությամբ ստեղծելով թարգմանչական ու նաև ինքնուրույն հոգևոր գրական մշակույթ, հոգեկեցույց ու կենարար գործունեությամբ ստեղծեց նշանագրեր նաև վրացիների ու աղվանների համար ևս: Հայոց ազգի կյանքում բազմաթիվ են օրինակներ, որոնցում կենսահաստատվել և արդ՝ իմանալի է մարդկային ու նաև հայոց ինքնությանը, կենսակերպին, մշակույթին, քաղաքակրթական-հոգևոր ու բարոյական գործունեությանը ներհատուկ հիմնորոշ սկզբունք ու իմաստության խորհուրդ, այն է՝ հայ ինքնության, կյանքի ու մշակույթի իսկոթեն հոգևոր-քաղաքակրթական, բարոյական ներկատարելագործումն ու հեռանկարային զարգացումը հնարավոր, անհրաժեշտ ու նախընտրելիորեն պիտոյական տեսանել միմիայն միմյանց ու նաև այլոց հետ հոգեկեցույց ու կենարար գործունեությամբ, երբ այն ինչ կրթունակ է իրեն՝ ներկայանա որպես այդպիսին նաև այլոց և հենց ողջ մարդկությանը: Ասացյալի արդեն նաև մերօրյա վավերացումն ու շարունակականությանն օժանդակումն է այն, որ ս. Գրիգոր Նարեկացու «Մատենան Ողբերգութեան» երկի՝ բազմաթիվ լեզուներով թարգմանյալ լինելու ու նրա աղոթամատյանի հոգեկեցույց ու կենարար,

ազատարար ու փրկարար նշանակությանը հաղորդ և հենց իրենց լեզվով բազում անձանց աղոթակցության փաստացի իրողությամբ, բազմաց հայցմամբ ու միջնորդությամբ Հոռմի Պապի կողմից հայ մեծ աղոթողի ու աստվածաբանի վերադասումը տիեզերական վարդապետների շարքում:

5. Մովսես Խորենացու անմիջական ուսուցչի՝ Մեսրոպ Մաշտոցի ու աշակերտակիցների, ինչպես նաև նախնյաց մեծերի կողմից հայոց կյանքում բազմիցս իրագործված բարենշանակ վերաբերմունքը օտարների ու նույնիսկ թշնամիների նկատմամբ՝ սկզբունքորեն օրինակյալ է ու հստակ արտահայտվում է նաև մշակույթում և հենց Պատմահոր պատմական երկում ու պատմահայեցակարգում: Մասնագետ պատմաբաններին և ժամանակակից ընթերցողին հայտնի է, որ որոշ և այդ թվում՝ Ասորեստանի թագավորների սեպագիր արձանագրություններ և պատմիչներից ոմանց պատմագրություններ այլոց հոգիների ու նրանց գործության նկատմամբ գերազանցության ու հաղթանակի ձգտելով և դրա վկայությունը տեսնելով նրանց մարմինների ու սեփականության, որոնցում և՛ մարմնական ու կյաթեղեն գործության նկատմամբ իրենց գերիշխանությունն ու տիրապետությունը հաստատելու գործերում ու դրանց պատմություններում և, ըստ էության, հենց դրանցում միայն տեսնելով իրենց անձերի մեծարանքի ու փառքի հնարավորությունն ու իրագործումը, ոչ միշտ ստուգությամբ են պատմում նախահարձակության մտախիվների, արշավանքների հաջողության, ասպատակված ու բռնազավթված երկրների բնիկ ժողովուրդների և կոնկրետորեն՝ նաև հայ ազգի մասին և իրանցում ոչ միշտ ճշմարտությամբ ու արդարացիորեն՝ նվաճված կարգավիճակում և կյանքի ու գործերի անխմաստության մեջ են ցուցանում նրանց: Մովսես Խորենացու վերաբերմունքը պատմիչներից ոմանց ու այլևայլ եղելությունների մասին նրանց պատմություններին խիստ զգուշավոր է, և ոչ բոլորին է նա անվանում «արդարաբան»: Խորենացին չի հավանում կամայական հոժարությամբ և ոչ ըստ ճշմարտության պատմումն ու բուն պատմվողը, այլ՝ միայն այնպիսի պատմումն ու պատմվողը, որ արդարաբան է և որպես այդպիսին է՝ իրենում պատմվող ճշմարտության ու բարու արդարությամբ: Ինչպես և բազմիցս նշում է իր երկում, նա հայոց նախնյաց ու նաև իրեն ժամանակակից կյանքի եղելությունները քննության է առնում ու մեկնորոշում արդարաբանությամբ: Եվ ի տարբերություն ոչ-ստուգապատում ու ոչ-արդարա-

բան այլևայլ երկերի, իր պատմության մեջ Պատմահայրն աստվածային իմաստությանը ներկրթյալ ինքնությամբ հետևելով Ճշմարտությանն ու ստուգությանը, Բարուն ու առաքինությանը, այդօրինակ արդարաբանությամբ այլ բնույթի վերաբերմունք է ցուցաբերում նաև օտարների ու նույնիսկ թշնամիների նկատմամբ: Տարբերակված այս վերաբերմունքը, հարաբերությունն ու գործողությունը, միով բանիվ՝ ողջ կենսագործունեությունը «օտարի» ու նույնիսկ «թշնամու» նկատմամբ զանազանորեն է դրսևորվել ընդհանրապես մարդկության կյանքում և կոնկրետորեն՝ Բազմայլ ազգերի կենսակերպում ու պատմիչների երկերում: Իսկ Մովսես Խորենացու մտահայեցումը իմաստության ուսումնասեր յուրաքանչյուրի նկատմամբ հայտնողական պոտենցիա ունեցող պատմական իսկությանն ու խորհրդին, որ և պահյալ է մարդկության և կոնկրետորեն՝ հայոց կյանքի իրադարձություններում ու գործերում, իսկը քրիստոնեական է և այլոց՝ թշնամիների ու նաև ոչ թշնամի օտարազգիների նկատմամբ վերաբերմունքը՝ արդարաբան: Եւ իր պատմության մեջ Բազմաթիվ օրինակներով նշում է, որ այլոց օտարների ու նույնիսկ թշնամիների երբեմնի խոսքերում և-կամ գործերում ներկա էր իմաստություն, քաջություն կամ որևոր այլ առաքինություն, որոնք և ուսանելի գտանելով, ուսանեցին և ներանձնյալ՝ ինքնացան ու կյանքում գործի վերածեցին, թեև ոչ ամենքը, Բայց և հայոց ազգի կյանքում մշակութային ու հենց հոգևոր պատմականության ոչ սոսկ հնարավորություն, այլ՝ հույժ նպաստավորություն արարող և պատմության իսկ շնորհիվ՝ ուսումնասեր ամենայն իրենց սերունդներին առհավետ ժամանակակից՝ հայոց մեծ նախնիները: Ոչ ամենքը, Բայց և Բազում են այնոցիկ, որ ի գորու են լինում ուսանել և իմաստության հասու դառնալ նույնիսկ թշնամիներից: Բազմաց ինքնությունում ու կյանքում լուկ այս կամ այն չափ ներկա այս առաքինության շնորհը, ըստ մարդկային կարողության, իր կատարելության մեջ որպես ձեռքբերյալ ու ջանքի քրտնությամբ աճեցյալ, այլ ոչ սոսկ բնական կամ բնատուր առաքինություն, հազվադեպ է տեսանելի, և մարդկանցից միայն հասու ու կենտ ումանք ունեն այն իրենցում ներանձնյալ ու կյանքում արդյունագործված: Մարդկանց, ազգերի մեջ Բազմաց կյանքում է նկատելի արհամարհանք կամ քամահրանք թշնամիների նկատմամբ: Ոչ ամենքին, այլ՝ առավել քիչ, Բայց և նույնպես Բազմաց է հասուկ թշնամիներին չանարգելն ու չանվանարկելը և, ընդհակառակը, Բարի, իմաստուն, քաջ կամ որևիցե այլ

առաքինությամբ օժտված անվանելը, պատվելը և ուսանելը: Մակայն, առավել հազվադեպ էն այն քչերն ու հենց ընտրյալները, որ չունենալով արեամարեանք կամ քամահրանք թշնամիների նկատմամբ, իմաստության ներկրթյալ՝ հոգևոր հայեցողություն ու վերաբերմունք են դրսևորում ամենքի նկատմամբ, այնպիսին, որ նույնիսկ թշնամիների մեջ՝ տեսակետում, խոսքում կամ գործում իմաստություն տեսանելով՝ անհոգության չեն մատնում ու անտեսում, այլ՝ բաց ու պատրաստ լինելով ուսանել ու հենց ուսանելով անգամ նրանցից, չեն ուրանում նրանցից ուսանությունը և միմիայն իրենց պատշաճ ու պատվական գտնում այդ իմաստությանն ի մտի գալը, այն խոսելն ու գործերում արդյունավորելը: Արտաշեսի ու ավանաց արքայադստեր՝ Սաթենիկի հանդիպման կենսադրվագի իմաստապատումը հյուսելիս՝ Խորենացին բացորոշ գրում է հայոց թագավորին ուղղված՝ ավանաց թագավորի ու իր դստեր խոսքում բովանդակյալ՝ վեհանձնության ու խաղաղության իմաստության խորհուրդի և Արտաշեսի կողմից հավանության արժանի գտնելու ու անսալու մասին⁵: Այնինչ՝ նախնայաց ու նաև ժամանակակից կյանքում առավել բազմաթիվ են դեպքեր ու անձինք, երբ նույնիսկ մերձավորից՝ ազգականից, ընկերոջից, բարեկամից, ուսուցչից կամ ոմն մեկից ուսանելով իմաստություն, ինքնասեր ու ինքնահավան հայարտությամբ՝ չեն խոստովանում նրանցից ուսանյալ իրենց իմաստությունը, այլ միայն իրենց Ես-ին արժանի ու վերագրելի գտնում այդ իմաստությանը հասու լինելու կարողությունը: Խորենացու պատմության ոչ միայն այս դրվագում, այլև հայոց կյանքում Արշակունյաց գահակալության հիմնադիր, ծնունդով ոչ հայազգի Վաղարշակ Ա Իմաստուն Պարթև Արշակունի թագավորի գործերը հանգամանակից պատմող երկու հատվածներում⁶ հստակ կերպով արտահայտվում է եղելությունների իսկությունը հայտող իմաստի ու իմաստության խորհուրդի՝ պատմական անձի Վաղարշակի ու նաև պատմիչի՝ Մովսես Խորենացու կողմից իրենց կեղծ Ես-ից ինքնահրաժարման կառուցվածքով հասկացում ու մեկնաբանություն, որով միայն կարող է տեղի ունենալ անձի իմաստացումը⁷: Եվ զարմա-

⁵Տե՛ս Մովսես Խորենացի. Պատմութիւն Հայոց, Եր., «Հայաստան» 1991, էջ 177-178:

⁶Նույն տեղում, էջ 28-30 և 104-118:

⁷«Կեղծ Ես»-ից հրաժարման կառուցվածքով միայն հնարավոր, անհրաժեշտ ու նախընտրելի՝ հասկացման և մեկնաբանության որպես յուրացում ըմբռնումը ժամանակակից հերմենևտիկայում հստակամտորեն բացորոշում է Պ. Ռիկյորը (տե՛ս

նալին ու սքանչելին այն է, երբ ոչ միայն տվյալ անձը՝ Արտաշես թագավորն է թշնամու խնդրանքում ուսանելի գտնում բարու գործությանը ներհատուկ վեհանձնության ու ներողամտության և արդյունքում՝ խաղաղարար իմաստության խորհուրդ, այլև պատմիչը: Քանզի Խորենացին հայոց կյանքի եղելումից որևոր դրվագներ պատմելիս՝ լռության չի մատնում այլոց առաքինություններն ու նրանցից ուսանելի և հայոց մեծաց կողմից նաև հենց ուսյալ՝ իմաստության եղելության իսկությունը, այլ՝ ազնիվ ու անկեղծ խոստովանությամբ ի պատում հյուսմամբ՝ այդ իսկությունն ու խորհուրդն է բացահայտում ընթերցասեր ու իմաստության ուսումնասեր, շնորհ-ա-կալ (շնորհը կալոյ, շնորհընկալ) իր ժամանակակիցներին և «զկնեացն»՝ մեր ազգի և օտարալեզու թարգմանությամբ՝ արդեն նաև այլ ազգերի սերունդներին:

6. Մովսես Խորենացու պատմագիտական, որին ներհյուսությամբ նաև պատմափիլիսոփական հայեցակարգում իր նախընտրելի ընթերցողին⁸՝ «ընթերցասեր»⁹ և ամենայն առաքինության ու բարեկարգության «ուսումնասեր»¹⁰ ժամանակակիցներին ու սերունդներին հղվածությամբ՝ ներկա է մարդկային ու կոնկրետորեն նաև հայոց ինքնության, կյանքի ու մշակույթի քաղաքակրթական-հոգևոր կենսագոյությունն հնարավորող ու ապահովող իմաստության խորհուրդ ու հայեցակարգ, որ և նշանակալի է հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման ու հեռանկարային զարգացման համար: Հայոց Պատմահայրը պատմելով հայոց կյանքի բարենշանակ կամ չարանշանակ եղելություններ և այդկերպ՝ ինքնության, կենսակերպի ու

Ricoeur P., Appropriation – Hermeneutics and the Human Sciences, Cambridge University Press, Cambridge. London. New York, 1982.P.183, 191-193; տե՛ս նաև Քոչարյան Ռ., Մեկնաբանության որպես «յուրացում» նորովի ըմբռնումը Պ. Ռիկորի հերմենևտիկայում//«Փիլիսոփայությունը արդի աշխարհում» UNESCO-ի Փիլիսոփայության միջազգային օրվա կապակցությամբ գիտաժողովի կյուբեր, գ. IV, Եր., «Լիմուշ» հրատ., 2014, էջ 73-77):

⁸Տե՛ս Քոչարյան Ռ., Հերմենևտիկական իրադրությունը և «պատմության ընթերցողը» Մովսես Խորենացու պատմագիտական հայեցակարգում//Գիտական հողվածների ժողովածու, Գիտակրթական Միջազգային Կենտրոն, Եր., 22 ԳԱԱ, «Ձանգակ», 2014, էջ 232-243:

⁹«Իսկ դու, ո՛վ ուշիմ ընթերցասերդ, հայե՛աց ... և զարմացի՛ր» (Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Եր., Տիգրան Մեծ, 1991, էջ 17 (զլուխ Ե, տ. 12-14)):

¹⁰«...ո՛վ ուսումնասեր դու և յայտոսիկ զմեզ աշխատեցուցանող» (նույն տեղում, էջ 22 (զլուխ Զ, տ. 11)):

մշակույթի կայացման հնարավորություններում՝ և՛ այդ ամենը ներկատարելագործող լավը, և՛ այդ ամենը կազմալուծող վատը, «ընթերցատեր»-ին և «ուսումնասեր»-ին է ավանդում, իրատում ու հորդորում, ի համեմատ իրագործվածի, հրաժարումն՝ ամենայն չարանշանակում ու կենսակործանում և հենց նմանումն՝ ամենայն բարենշանակում ու բարեկարգում կերպացյալ խորհուրդների: Իր պատմությամբ հաղորդելով հայոց մեծաց առաքինի նկարագիր՝ նա մարդկային կյանքի տեսական ու գործնական իմաստության «ուսումնասեր» ամենայն ընթերցողներին իմանալ է ընձեռում, թե բարեկարգության միտող ինչպիսի գործեր են իրականացնում, աստվածային խնամարար ու աջակից կամոք, այդորակ «ներքին» կարգավորություն ունեցող անձինք: Իր պատմության բազմաթիվ դրվագներում նա բացորոշում է հայոց կյանքի էական եղելումի իսկությունը հայտող իմաստը, որում և բարենշանակ՝ հոգեկեցույց ու կենարար իմաստության խորհուրդները՝ ի բարեկարգություն ժամանակակիցների ու սերունդների ներքին ու արտաքին կյանքի: Խորենացին զուտ մարդկային իրողություններում իմաստասիրում՝ հասկանում ու մեկնողաբար հայտորոշում է մարդկային ինքնությունում, կյանքում ու մշակույթում բուն «հոգևորությունը»՝ առաքինությունները: Իսկ ըստ քրիստոնեական վարդապետության, առաքինությունը աստվածայինն է մարդու մեջ: Պատմահայրը «մարդկային ինքնության և կենսակերպի», «ինքնության և ամենայն գործունեության» միջև բացահայտում է «ներքինի» ու «արտաքինի» ազդեցիկ փոխհարաբերակցություն ու անմիջական կապ: Հայտնացույց անելով հայոց մեծաց ինքնությանը հատուկ առաքինություններ կամ արատներ, այդորակ «ներքինի» ներգործուն պատճառով նա հայտորոշում է դրանց ներկայությունը նաև «արտաքինում» ու բուն հետևանքում՝ ամենայն գործունեությունում, կյանքի ու մշակույթի գործերում: Մարդկային և կոնկրետորեն՝ հայոց ինքնության, կյանքի ու մշակույթի գոյության «արտաքինը»՝ բարենշանակ ու կենարար կարգավորությունը կամ չարանշանակ ու կործանարար անկարգավորությունը նա հասկանում ու մեկնորոշում է որպես հետևանք, որի պատճառը «ներքինն» է՝ մարդկային ինքնության առաքինությունները ու բարենաստությունները կամ մեղքերը, արատները, նանրամուրությունները (ունայնամուրությունները) ու չարամուրությունները:

Մարդկային ինքնությունում, կյանքում ու մշակույթում ուղղակիորեն բացահայտելով բուն «հոգևորությունը»՝ առաքինությունները, ըստ

Էություն, Խորենացիի մարդկային իրողություններում իմաստասիրում՝ հասկանում ու մեկնողաբար հայտորոշում է «աստվածայինը, ընդ որում՝ ոչ լույս ակնարկով հղելով «աստվածային նախախնամությանը»: Պատմահայրն ուսումնասիրվող զուտ մարդկային իրողություններում որոնում և ըստ հարկի ու պատշաճի առնչում ու ակնարկով հայտնաբանում է աստվածայինը՝ հայտնացույց անելով մարդկային կյանքի անցյալում, ներկայում ու ապագայում աստվածայինի ու մարդկայինի անհրաժեշտ ու նախընտրելի միանյութ համաներկայություն: Եվ նրա պատմության դիտավորությունն ու կատարումն է՝ հայոց կյանքի էականորեն նշանակալի եղելումի իմաստասպատումով ժամանակակիցների ու սերունդների հասկացման ձգտմանը մատչելի դարձնել իմաստություն՝ ի նպաստ նրանց ինքնության ներքին ու արտաքին կյանքի բարեկարգության ու փրկության: Եվ կարելի է նկատել, որ մարդկային ու կոնկրետորեն հայոց ինքնության, կյանքի ու մշակույթի առաքիլությամբ կարգավոր քաղաքակրթական հոգևոր ու բարոյական, մշակութային ու կրթական, սոցիալական ու քաղաքական... գոյության ներկատարելագործվող ընթացքը՝ պոստենցիան ու իրագործումը նա ամենևին էլ չի առկախում այլոց ինքնության, կենսակարգության ու նաև փոխհարաբերակցության միմիայն արտաքին պայմաններից ու խնդրից, ինչպես այդ արվում ու հենց շեշտադրվում է ներկայում, այլ՝ իր պատմությունում մարդկային ամենայն ազգաց ու կոնկրետորեն հենց հայոց ինքնագոյության խնդրի լուծումն ու բուն «անելիքը» տեսադրում ու հայտորոշում է սկզբունքորեն ու առաջնահերթորեն «ներքինից» դեպի «արտաքին», առաքինացյալ ինքնությամբ՝ արդեն նաև առաքինացյալ ընդհանուր կենսակարգ ու հենց կոնկրետորեն անձնավորյալ կենսակերպ: Այդկերպ հնարավոր է դառնում հասու լինել ամենայն արտաքին պայմաններում՝ ներկա ու հեռանկարային բուն սեփական «անելիքի» իդեպի դիտավորության ու ըստ այդմ՝ կերպարանման ու կատարումի խնդրակարգին և լուծմանը, այլևս դրանք սկզբունքորեն չառկախելով և նույնիսկ չկաշկանդելով ու արոյունքում անգործության մատնելով ու ոչնչելով՝ արտաքին պայմանների անբարենպաստության պատճառաբանության (ինքնա)խաբկանքով: Մովսես Խորենացու պատմությունում բովանդակյալ տեսական ու գործնական իմաստությունը անհրաժեշտ ու նախընտրելի պիտոյությամբ հոգեկեցույց ու կենարար իր գործության ներկայությունն է հաստատում ներքինում՝ «մարդկային ինքնությունում» և այդկերպ իր ներքին կայաց-

ման հենադրությամբ՝ արդյունավորվում նաև արտաքինում՝ ընդհանուր կենսակարգում ու կոնկրետորեն անձնավորյալ «կենսակերպում»: Արդ՝ կարելի է ամրագրել, որ նրա պատմությունում ներկա է առաքինություններով կարգավոր ինքնության՝ «ներքինի», և կենսակարգի ու կենսակերպի՝ «արտաքինի», ներգործունեորեն ազդեցիկ պատճառահետևանքային փոխհարաբերակցությամբ ու անմիջական կապով ներկատարելագործվող քաղաքակրթական-հոգևոր ու բարոյական, անհրաժեշտ ու նախընտրելի կենսագոյությունն իմաստասիրող ու հայտորոշող՝ իրենում բովանդակյալ հոգևորությամբ զարմանալիորեն իմաստուն ու օրինակելի հայեցակարգ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Օսմանյան կայսրությունում թուրքերի կողմից բնիկ հայերի հետ համակեցությունում դրսևորվել է «այլ» ինքնությունը ժխտող վերաբերմունք, հարաբերություն ու գործողություն, իրականանալով զանգվածային սպանողով, կոդոպուտով, էթնիկ զամամբ՝ բռնի տեղահանությամբ, հայրենագրկմամբ ու ցեղասպանությամբ: Ի տարբերություն «օտարի» հետ համակեցությունում իրենց ինքնության այդօրինակ բարբարոս ու ոչնչարար դրսևորման՝ սկզբունքորեն այլ է՝ հոգեկեցույց ու կենարար, «օտարի» նկատմամբ հայոց վերաբերմունքն ու համակեցությունը և նույնորեն նաև հայ պատմիչների ու կոնկրետորեն՝ Մովսես Խորենացու երկերում արտահայտված դրվատական վերաբերմունքը «օտարի» քաղաքակրթական՝ հոգեկեցույց ու կենարար մտքին, խոսքին ու գործին: Նրա պատմությունում ներկա է հայոց ինքնության հոգևոր-քաղաքակրթական կայացման հայեցակարգ՝ «ներքինի» և «արտաքինի» պատճառահետևանքային կապի և ինքնության ու կենսակերպի առաքինություններով բարեկարգման խղճաներն իրենում բովանդակող, որ և էական է նաև Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման և ազգի ու պետության հեռանկարային զարգացման համար:

Բանալի բառեր՝ ցեղասպանություն, ինքնություն, համակեցություն, «օտար», քաղաքակրթական հայեցակարգ:

**ПРОБЛЕМА САМОСТИ В СОСУЩЕСТВОВАНИИ С
“ДРУГИМ” И ИСТОРИЧЕСКАЯ КОНЦЕПЦИЯ
“ЦИВИЛИЗАЦИОННО-ДУХОВНОГО БЫТИЯ”
МОВСЕСА ХОРЕНАЦИ**

Ромик Кочарян

*Кандидат философских наук, доцент,
Матенадаран, Институт
древних рукописей им. св. Месропа Маштоца*

РЕЗЮМЕ

В Османской Империи у турков в сосуществовании с армянами проявлялись отрицающие “иную” идентичность отношения, сопровождающееся массовыми убийствами, насильственной депортацией, этнической чисткой - геноцидом и патрицидом. В отличие от такого варварского проявления своей самости в сосуществовании с “другими”, у армян совсем иное, духоживительное и животворное, отношение к другим народам, к их цивилизациям и мышлению, что можно заметить также в произведениях армянских историков, в том числе и в сочинениях Мовсеса Хоренаци. В “Истории Армении” Мовсеса Хоренаци присутствует концепция “духовно-цивилизационного становления армянской “самости”, охватывающая как причинно-следственные связи “внутреннего” и “внешнего”, так и идеалы преобразования “самости” и образа жизни. И эта концепция по сей день существенна также для преодоления последствий геноцида армян и перспективного развития нации и государства.

Ключевые слова: геноцид, самость, общежитие, “другой”, цивилизационная концепция.

**THE PROBLEM OF SELF-IDENTITY IN COEXISTENCE WITH
“OTHERS” AND MOSES KHORENATSI’S HISTORICAL
CONCEPTUAL FRAMEWORK OF
“CIVILIZATIONAL-SPIRITUAL BEING”**

Romik Kocharyan

*PhD in Philosophy, Associate Professor,
Matenadaran, Research Institute of Ancient
Manuscripts (named after Mesrop Mashtots)*

SUMMARY

In the Ottoman Empire, Turks manifested in their coexistence with Armenians a negative attitude to, treatment of and action regarding the “others” self-identity - accompanied by mass killings and massacre, robbery, deportations and ethnic cleansing, genocide and destruction of Armenians’ homeland. In contrast to such barbaric and destructive demonstration of self-identity in coexistence with “others,” the Armenians’ attitude to and coexistence with “others” are fundamentally different, caring and tolerant. That attitude is manifested also in the works of Armenian historians, specifically in the works of Moses Khorenats’I, as laudatory concerning genuinely civilizational thoughts, words and actions of “others”.

His ‘History’ contains a conceptual framework for spiritual-civilizational consolidation of the Armenian identity containing the ideas of a causal link between the “internal” and “external” and of the virtues of improvement of the self and lifestyle.

This conceptual framework is still essential for overcoming the consequences of the Armenian Genocide and for effective development of the nation and the state.

Key words: genocide, self-identity, coexistence, “others”, civilizational conceptual framework.

ՀԱՅՈՑ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՈՒ ԳՈՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՆՆԵՐԸ
ԵՎ ԽԱՉԱՏՈՒՐ ԷՐԶՐՈՒՄԵՑՈՒ ԳԻՏԱՄԵՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ՈՒ ԲԱՐՈՑԱՀՈԳԵՎՈՐ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

Ներսես Քոչարյան

*Խ.Արքայանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի ասպիրանտ*

XVI-XVII դդ. հայոց հայրենի բնաշխարհը Մեֆյան Պարսկաստանի և Օսմանյան կայսրության միջև տևական պատերազմական գործողությունների կենտրոնատեղի էր՝ երկուստեք նկատվելով որպես իրենց իշխանապետության հաստատման շահադիտության առարկա. Վանը, Էրզրումը, Կարսը... ձեռքից ձեռք էին անցնում և յուրաքանչյուր մարտնչող կողմ հակառակորդի դեմ վարում էր «այրված» տարածքի քաղաքականություն: Հայ ազգն իր հայրենի կենսատարածքում սեփական պետականության անկումից հետո, դարեր շարունակ չունենալով այլևս ազգային պետություն, որը պետք է ապահովեր արտաքին անվտանգությունն ու կյանքի բարեկարգությունը, գտնվում էր